ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ, ԷԴՎԱՐԴ ԳԱԼՏԱԳԱՉՅԱՆ

Արդի ժամանակաշրջանում, պայմանավորված բարձրագույն և միջին մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումներով, փոխվում է նաև տարբեր բնագավառների մասնագետների պատրաստման բովանդակությունը, որտեղ իր ուրույն տեղն ունի ֆիզիկական պատրաստությունը[1]: Ըստ այդմ՝ ծագում է օբյեկտիվ անհրաժեշտություն՝ վերանայելու մասնագիտական կրթական համակարգում ֆիզիկական դաստիարակության, մարզական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու մեթոդները:

Այսօր, չնայած որոշ բարեփոխումներին, ակնհայտ է, որ հանրապետությունում մեծ է ֆիզիկապես թույլ զարգացած ուսանողների թիվը և, ըստ վիճակագրական տվյալների՝ այն աճման միտում ունի[2]: Բացի այդ, մեծ է այն ուսանողների թիվը, ովքեր համատարած բացակայում են ֆիզիկական կուլտուրայի դասերից[3]:

Վերջին տարիներին միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքի, ֆիզկուլտուրային զանգվածային աշխատանքների և ուսանողների դիրքորոշումների ու հետաքրքրությունների պարզաբանման ուղղությամբ լայնածավալ ուսումնասիրություններ չեն կատարվել, սակայն ակնհայտ է, որ տվյալ բնագավառում առկա են մի շարք խնդիրներ, որոնք անհրաժեշտ է շուտափույթ լուծել:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքի, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ սովորողների վերաբերմունքն ու հետաքրքրության աստիճանը պարզելու համար մշակեցինք հատուկ հարցաթերթիկ, որը բաղկացած էր 22 հարցից: Սոցիալ-մանկավարժական ուսումնասիրություններն իրականացվել են Երևանի թիվ 3 և 6 արհեստագործական ուսումնարաններում (185 ուսանող՝ դերձակ-մոդելավորող, էլեկտրագազաեռակցող, խոհարար, ավտոփականագործ, մենեջմենտ, վարսահարդար), Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում (75 ուսանող՝ մոդելավորող, գեղանկարիչ, քանդակագործ), Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունա-

---

[1] Տե՛ս **Վ. Նազարյան,** Բժշկական քոլեջների սովորողների պրոֆեսիոնալ կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան, մեթոդական ձեռնարկ, Վանաձոր, 2009, 65 էջ:

[2] Տե՛ս **Акопян Е. С., Тер-Маргарян Н. Г.** Ротационная подвижность позвоночника школьников как критерий оценки его функционального состояния // «Гигена, санитария», М., 2009, №1, էջ 60-63, **Ս. Ա. Հակոբյան,** Ուսանողների ֆիզիկական դաստիարակությունը, Եր., 2007, 120 էջ:

[3] Տե՛ս **Գ. Ա. Պետրոսյան,** Ուսանողների մասնագիտական կիրառական ֆիզիկական պատրաստության խնդիրները, Материалы респ. научно-практической конференции, Ер., 2003, էջ 30-34:

կան պետական քոլեջում (78 ուսանող՝ խոհարար, տուրիզմ, գինեգործ) և Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջում (72 ուսանող՝ բանկային գործ, հաշվապահ, հաշվապահական հաշվառում): Սոցիոլոգիական հարցումներին ընդհանուր թվով մասնակցել են 410 սովորողներ:

Հարցվողների 30.5 տոկոսը ուներ գերազանց, 40.5 տոկոսը՝ լավ և մնացած 29.5-ը տոկոսը՝ բավարար առաջադիմություն: Պարզվեց, որ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների 37.6 տոկոսը հաճույքով է մասնակցում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասերին, 42.6 տոկոսը ոչ միշտ է հաճույքով մասնակցում, իսկ մնացած 19.7 տոկոսը հաճույքով չի մասնակցում, քանի որ, ըստ նրանց, չկան համապատասխան պայմաններ, յուրաքանչյուր դասին գրեթե միշտ նույն խաղն են խաղում, չեն պահպանվում հիգիենայի տարրական պայմանները: Հնչեցին նաև կարծիքներ «Ֆիզիկական կուլտուրա» առարկա դասավանդող առանձին ուսուցիչների ոչ մասնագիտական պահվածքի, արտաքին տեսքի և այլ բացթողումների մասին: Նման պատասխանները բավականին լուրջ խորհելու տեղիք են տալիս և պահանջում են համապատասխան լուծումներ:

Որպես անբարենպաստ գործոն առանձնացնենք այն, որ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների 62.4 տոկոսը տանն ընդհանրապես ֆիզիկական վարժություններ չի կատարում, 32.4 տոկոսը կատարում է հազվադեպ, և միայն 5.2 տոկոսն է մշտապես կատարում:

Մեր այն հարցին, թե հետաքրքրվում են, արդյոք, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վերաբերյալ տեղեկատվությամբ և հաճախում են մարզադպրոց, հարցվողների 21.2 տոկոսը տվել է դրական պատասխան: Փաստենք նաև, որ դրական պատասխան տվողների շարքում առաջատար տեղերում էին առավելապես Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական քոլեջի ուսանողները: Մեզ համար խիստ հետաքրքրական էր այն փաստը, թե որ մասնագիտությամբ մասնագիտացող ուսանողներն են առավելապես հաճախում մարզադպրոց, արդյունքները պատկերված են գրաֆիկ 1-ում:

Գրաֆիկ 1

Մարզադպրոց հաճախելիության պատկերը ըստ մասնագիտության (տոկոսներով)



«Իսկ հատկապես ո՞ր մարզաձևերով են մարզվում սովորողները» հարցման արդյունքները պատկերված են գրաֆիկ 2-ում: Որպես բացասական երևույթ հարկ է նշել, որ սովորողների 70.2 տոկոսը ընդհանրապես չի հաճախում մարզադպրոց: Իսկ թե ինչո՞ւ չի հաճախում մարզադպրոց, հարցվողների 36.5 տոկոսը պատասխանել է, որ բավարարվում է ֆիզիկական կուլտուրայի դասերով, 25.0 տոկոսը՝ սպորտով չի հետաքրքրվում, 23.6 տոկոսը՝ սիրում է զբաղվել սպորտով, սակայն ծնողները արգելում են, և 14.9 տոկոսը՝ սիրում է, բայց ժամանակը չի բավարարում:

Գրաֆիկ 2

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների հաճախումը մարզադպրոց՝ ըստ մարզաձևերի (տոկոսներով)



«Հնարավորության դեպքում ո՞ր մարզաձևի մարզումներին կցանկանա հաճախել» հարցի պատասխանը պատկերված է գրաֆիկ 3-ում:

Գրաֆիկ 3

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների առավել նախասիրած մարզաձևերը՝ (տոկոսներով)



Գրաֆիկ 4-ում պատկերված են այն դրդապատճառները, որոնք մարզաձևի ընտրության համար հիմք են հանդիսացել:

Մեզ համար առանցքային էր այն հանգամանքը՝ ուսանողներն առավել հաճույքով մասնակցում են ֆիզիկական կուլտուրայի դասերի՞ն, թե՞ մարզական պարապմունքներին: Պարզվեց, որ հարցմանը մասնակցած ուսանողների 48.3 տոկոսը հաճույքով մասնակցում է ֆիզիկական կուլտուրայի դասերին, իսկ 51.7 տոկոսը՝ մարզական պարապմունքներին:

Գրաֆիկ 4

Մարզաձևի ընտրության դրդապատճառները՝ (տոկոսներով)



Այս հարցի պատասխանների վերլուծությունից պարզվեց, որ միայն Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջի ուսանողներն են մեծամասնությամբ նախընտրում «Ֆիզիկական կուլտուրա» առարկան, որը, մեր կարծիքով, վկայում է ֆիզիկական կուլտուրայի դրվածքի և անցկացվող դասերի որակի մասին:

Իսկ մյուս ուսումնական հաստատությունների ուսանողներն առավելապես նախընտրում էին մարզական պարապմունքները, ինչը, ցավոք, խոսում է ֆիզիկական կուլտուրայի դրվածքի ոչ բավարար կամ ոչ պատշաճ մակարդակի մասին:

Մարզական պարապմունքներ նախընտրած սովորողների զգալի մասը պատճառաբանում էր, որ դրանք ավելի հաճելի են, հետաքրքիր և ավելի լավ կազմակերպված, քան ֆիզիկական կուլտուրայի դասերը, կամ՝ մարզիչը ավելի մատչելի է բացատրում և անցկացնում մարզումները, քան ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչը: Այս պատասխանները կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Առաջին՝ դրական երևույթ է, որ բավականին բարձր է առանձին մարզաձևերի դրվածքը, ինչպես նաև սովորողների հետաքրքրության մակարդակը սպորտի հանդեպ, երկրորդ՝ ցավալի է, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դրվածքը, ուսուցիչների մասնագիտական-մանկավարժական գիտակության մակարդակը միջին մասնագիտական որոշ ուսումնական հաստատություններում համեմատաբար ցածր է, քան մարզիչներինը:

Մեզ հետաքրքրում էր նաև այն հարցը, թե միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում արդյոք գործո՞ւմ է մարզական ակումբ: Ուշագրավ է, որ հարցվողների 10.2 տոկոսը տվել էր դրական պատասխան և դա այն դեպքում, երբ մեր դիտումները և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների անմիջական հարցումները վկայում էին, որ ոչ մի ուսումնարանում չէր գործում մարզական ակումբ: Այսինքն՝ հարցվածների 10.2 տոկոսը պատկերացում չունի մարզական ակումբի մասին:

Հարցվողների մոտ 1/3 մասը տեղյակ չէր իրենց ուսումնական հաստատության ներսում մարզական անցուդարձին: Այսպես, նրանց 29.2 տոկոսն է նշել, որ իրենց ուսումնական հաստատությունում կազմակերպվել են մրցումներ:

Ուսանողների անտեղյակության կամ անտարբերության մասին է խոսում նաև այն փաստը, որ նրանց միայն 17 տոկոսն էր տեղյակ, որ իրենց ուսումնական հաստատությունը այլ ուսումնական հաստատությունների հետ մասնակցել է մրցումների: Ի հավելումն ասվածի պետք է նշել, որ նրանք հիմնականում մասնակցել էին ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, սեղանի թենիսի և շաշկու մրցումների:

Իսկ այն հարցին, թե արդյոք ուսումնառության ընթացքում բարձրացել է հետաքրքրության մակարդակը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ, հարցվողների 53.6 տոկոսը տվել է դրական պատասխան և 28.9 տոկոսը՝ դժվարացել է պատասխանել: «Իսկ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանդեպ վերաբերմունքի բարձրացումը ինչպե՞ս է արտահայտվել գործնականում» հարցին տրվել են հետևյալ պատասխանները՝ 15.9 տոկոսը ձեռք է բերել մարզական գույք, 27.2 տոկոսը կատարում է առավոտյան մարմնամարզություն, 21.3 տոսկոսը՝ ֆիզիկական կուլտուրայի դասերից չի բացակայում, 75.0 տոկոսը ավելի շատ է հետևում արտաքինին և կեցվածքին, 15.0 տոկոսը՝ ավելի հաճախ է դիտում մարզական հաղորդումներ, 18.1 տոկոսը՝ որպես հանդիսատես հաճախում է տարբեր մրցումների:

Մեզ հետաքրքրում էր նաև այն փաստը, թե արդյոք միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողները կցանկանային «Ֆիզիկական կուլտուրա» առարկան անցնել ուսումնառության բոլոր տարիներին: Պարզվեց, որ հարցվողների միայն 39.5 տոկոսն էր ցանկանում, իսկ 46.5 տոկոսը՝ չէր կողմնորոշվում և 13.9 տոկոսը, ցավոք, ընդհանրապես չէր ցանկանում:

Վերջին հարցը հետևյալն էր՝ ֆիզիկական դաստիարակության գործընթացն ավելի լավ էր իրականացվում հանրակրթական դպրոցո՞ւմ, թե՞ ներկա ուսումնառության վայրում: Սովորողների 74.3 տոկոսը նշել է հանրակրթական դպրոցը, 18.5 տոկոսը՝ ներկա ուսումնառության վայրը և միայն 7.1 տոկոսը՝ երկուսն էլ:

Այսպիսով, մեր հետազոտությունից պարզվեց, որ սովորողների մեծ մասը գիտակցորեն է մոտենում ֆիզիկական կուլտուրայի դասերին և կարող է բավական հստակ առկա իր ցանկությունները, նախասիրությունները, ինչպես նաև նշել որոշ բացթողումներ: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության գործընթացում նկատվող հենց մատնանշված թերություններն են պատ-

ճառ դառնում ֆիզիկական կուլտուրայի դասերին ոչ կանոնավոր հաճախելու և արտադասարանական պարապմունքների նկատմամբ ձգտման թուլացման:

Անցկացված հարցումների միջոցով բացահայտվել են այն գործոնները, որոնք խոչընդոտում են ուսանողներին ակտիվորեն ընդգրկվելու ֆիզկուլտուրային մարզական գործունեության մեջ, ինչպես նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անբավարար դրվածքը, որն ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, և պահանջում է համապատասխան լուծումներ:

АРТАК СТЕПАНЯН, ЭДВАРД ГАЛТАГАЗЯН – ***Физическое воспитание в средних профессиональных учебных заведениях.*** **–** Статья посвящена нынешнему состоянию физического воспитания в средних профессиональных учебных заведениях. В результате социально-педагогического исследования, в котором приняли участие 410 учащихся различной профессионализации, выявлены основные причины, препятствующие эффективному физическому воспитанию учащейся молодёжи, а также активному её вовлечению в этот процесс.

ARTAK STEPANYAN, EDVARD GALTAGAZYAN – ***Physical Education in Secondary Professional Training Institutions.*** – In this article we attempt to determine the current state of physical education in secondary vocational schools. We have carried out a social pedagogical investigation, which was attended by 410 students from a variety of professional areas. The study identified the main reasons hindering the effective implementation of physical education, as well as the active involvement of the students in the process of physical education.